

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ  
ՀՐԱԶՅԱ ԱՃԱՌՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԼԵԶՎԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ**

**ԱՍՏԴԻԿ ԱԼԲԵՐՏԻ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ**

**ԱՄԻՐՊՈՎԱԹ ԱՄԱՍԻԱՑՈՒ «ՕԳՈՒՏ ԲԺՇԿՈՒԹԵԱՆ» ԵՐԿԻ ԲԱՌԱՊԱՇԱՐԸ**

Ժ.02.01 «Հայոց լեզու» մասնագիտությամբ  
բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական  
աստիճանի հայցման ատենախոսության

**ՍԵՂՄԱԳԻՐ**

**Երևան - 2015**

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի պետական համալսարանում:

Գիտական ղեկավար՝

բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

**Ռ.Ս.Ղազարյան**

Պաշտոնական ընդդիմախոսներ՝

բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր **Լ.Ս.Յովսեփյան**

բանասիրական գիտությունների թեկնածու  
**Յ.Ս.Թադևոսյան**

Առաջատար կազմակերպություն՝ Երևանի Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան

Ատենախոսության պաշտպանությունը կկայանա 2015 թ. հունիսի 8-ին՝ ժամը 15:00-ին, ՀՀ ԳԱԱ Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտում գործող ԲՈՅ-ի՝ Լեզվաբանության 019 մասնագիտական խորհրդի նիստում:

Հասցե՝ Երևան, 0015, Գրիգոր Լուսավորչի 15:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2015 թ. մայիսի 5-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար՝

բ.գ.թ., դոց.

**Ն. Սիմոնյան**

## ԱՏԵՆԱԽՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

**ԹԵՄԱՅԻ ԱՐԴԻՎԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ:** Որևէ հեղինակի երկերի բառապաշարի քննությունը հնարավորություն է ընձեռում մախ և առաջ բացահայտելու և արձանագրելու այն ընդհանրությունները, որոնք հատուկ են տվյալ լեզվին նրա զարգացման տվյալ փուլում: Այս տեսանկյունից մեծ հետաքրքրություն են ներկայացնում Ամիրդովլաթ Ամասիացու բժշկագիտական աշխատությունները, որոնք մինչ այսօր հարուստ նյութ են տվել միջին հայերենի բառամթերքը ներկայացնելու և հնչյունական ու քերականական իրողություններն ուսումնասիրելու համար, սակայն մասնավորապես «Օգուտ բժշկութեան» երկի բառապաշարն առանձին քննության առարկա չի եղել<sup>1</sup>: ՕԲ-ի հարուստ ու բազմաշերտ բառապաշարի ուսումնասիրությունը հստակ ու ամբողջական պատկերացում կարող է տալ գրական լեզվի զարգացման տվյալ ժամանակի վիճակի մասին: Թեմայի ընտրությունը պայմանավորված է մաս միջին հայերենի համակողմանի ուսումնասիրության կարևորությամբ, քանի որ հայոց լեզվի այս փուլը նվազ խորությամբ է ուսումնասիրված:

**ԱՏԵՆԱԽՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ:** Ատենախոսության նպատակն է կատարել Ա.Ամասիացու ՕԲ-ի բառապաշարի համակողմանի քննություն, բնութագրել այնտեղ արտացոլված բառակազմական օրինաչափությունները և բառապաշարային առանձնահատկություններն ու փոփոխությունները, որոնք հատուկ են XV դարի հայերենին: Այս նպատակի իրականացման համար մեր առջև խնդիր ենք դրել.

1. Առանձնացնել և ուսումնասիրել բառակազմական կաղապարները՝ ընդգծելով դրանցով կազմված գրաբարյան և միջինհայերենյան կազմությունները, տալ յուրաքանչյուր կաղապարի ու ենթակաղապարի գործունեության ու գործառական բեռնվածության աստիճանը, ներկայացնել բառակազմական մակարդակում գործող համակարգային իրողությունները:

2. Առանձնացնել գրաբարյան այն բառերը, որոնք բնագրում գործածվել են նոր իմաստներով:

3. Ներկայացնել միջինհայերենյան նորաբանությունները:

4. Ներկայացնել երկում հանդիպող բոլոր փոխառությունները, դասակարգել դրանք ըստ փոխատու աղբյուրի՝ առանձնացնելով այն փոխառությունները, որոնք երկում գործածվել են առաջին անգամ կամ միակ վկայությունն են ողջ միջին հայերենի շրջանում: Փոխառությունները քննելիս ներկայացնել մաս պատմական, քաղաքական, լեզվական ու մշակութային այն հանգամանքները, շփումներն ու ազդեցությունները, որոնք՝ որպես արտալեզվական գործոններ, նպաստել են ընդհանրապես միջին հայերենի բառապաշարում կատարված փոփոխություններին:

**ԱՏԵՆԱԽՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԿԱՆ ՆՈՐՈՒՅԹԸ:** Սույն ատենախոսությամբ առաջին անգամ համակողմանիորեն ուսումնասիրվում է Ա.Ամասիացու ՕԲ-ի բառապաշարը: Հետազոտության արդյունքում ներկայացվել է 25 բառակազմական կաղապար և ենթակաղապար, որոնցից 20-ը՝ բառաբարդման, 5-ը՝ ածանցման, առանձնացվել է 222 միջինհայերենյան նորաբանություն, քննվել է 759 փոխառություն, որոնցից 354-ը՝ արաբերենից, 238-ը՝ պարսկերենից, 36-ը՝ թուրքական լեզուներից, 18-ը՝ հունարենից: Հատուկ առանձնացվել են այն բառերը՝ փոխառյալ կամ նորակազմ, որոնք բառարաններում վկայված են կամ միայն ՕԲ-ում գործածված, կամ դրանք մյուս վկայությունները ՕԲ-ից ավելի ուշ գրված երկերում են: Առանձնացվել են մաս այն

---

<sup>1</sup> Հակիրճության նպատակով մեր ուսումնասիրության բնագիրն այսուհետև կբերվի ՕԲ հապավմամբ:

բառերը, որոնք թեև բառարաններում բերված են որպես եզակի վկայություններ՝ գործածված միայն ՕԲ-ում, սակայն մեր ուսումնասիրության արդյունքում բացահայտվել են դրանց ավելի վաղ գործածությունները, մասնավորապես «Գագիկ Յեթումյան» կամ «Ավագ հեթմարան» կոչվող բժշկարանում:

**Ուսումնասիրության մեթոդները:** Ուսումնասիրության համար ընտրվել են հատկապես նկարագրական, կադապարման, կառուցվածքային, վերլուծական և վիճակագրական մեթոդները, ինչպես նաև կիրառվել են լեզվական փաստերի համադրման համաժամանակյա և տարաժամանակյա եղանակները: Բաղադրյալ բառերի բառակազմական վերլուծության ժամանակ կիրառել ենք նկարագրական լեզվաբանության մեջ գործող անմիջական բաղադրիչների մեթոդը, որի նպատակն է յուրաքանչյուր բառային միավոր բաժանել անմիջական բաղադրիչների՝ իմաստակիր նվազագույն միավորների՝ ձևույթների: Կադապարման մեթոդը ներառում է և՛ համադրության, և՛ վերլուծության մեթոդները, քանի որ կադապարը ներկայացնելով՝ մենք նախ համադրում ենք բաղադրիչները, նշում այդ բաղադրիչների հնարավոր քանակն ու կազմը տվյալ կադապարի մեջ և ցույց ենք տալիս դրանց բաղադրման ընթացքը, եղանակը, ապա նշում ենք բաղադրյալ բառերը՝ որպես առկա կազմություններ, որպես տվյալ կադապարի իրացման դեպքեր: Ստացվում է լեզվական միավորների և՛ համադրություն, և՛ վերլուծություն միաժամանակ: Բառապաշարի ծագումնաբանական ուսումնասիրության ժամանակ կիրառել ենք նաև պատմահամեմատական և իմաստաբանական վերլուծության մեթոդները՝ հատկապես հնչյունների համապատասխանությունների, հնչյունական օրենքների վրա հիմնվող: Սրանց հետ են կապվում նաև փոխառությունների տառադարձության օրինաչափությունները, որոնց հիման վրա ճշտել ենք մի շարք բառերի փոխառության աղբյուրը:

**ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿԱՆ ԵՎ ԳՈՐԾՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆ:**

Ատենախոսության տեսական նշանակությունը միջին հայերենի, հատկապես XV դարի բժշկագիտական գրականության լեզվի բառապաշարի ամբողջական ուսումնասիրությանը նպաստելն է: Ուսումնասիրության արդյունքները կարող են կիրառելի լինել «Յայոց լեզվի պատմություն», «Պատմական բառագիտություն», «Պատմական բառակազմություն» դասընթացներում, ինչպես նաև միջին հայերենի և արևելյան լեզուների, հատկապես պարսկերենի և արաբերենի փոխառնչակցություններին նվիրված ուսումնասիրություններում: Փոխառությունների ուսումնասիրության արդյունքում առանձնացվել են նոր միավորներ, որոնք հիմնականում ՄՅԲ-ում արձանագրված բառերի հնչյունային տարբերակներն են, մասամբ էլ նոր ստուգաբանություններ կամ իմաստաբանական ճշգրտումներ, որոնք հետագայում կարող են օգտակար լինել ՄՅԲ-ի լրանշակման և վերահրատարակման ժամանակ: Քանի որ ընդհանրապես բառապաշարի քննությանը վերաբերող աշխատանքների վերջում ներկայացվում են բառացանկեր, որոնք կատարած աշխատանքի յուրատեսակ ամփոփումն են, ուստի հարկ համարեցինք մեր ուսումնասիրության վերջում ներկայացնել ՕԲ-ի միջինհայերենյան բառապաշարը՝ այդպիսով ընդգծելով հետազոտության արդյունքն ու աշխատանքի գործնական արժեքը: Նշենք նաև, որ ՕԲ-ի տպագրված միակ տարբերակն այդպիսի բառացանկ չունի: Այն ունի մի բառգրքույկ, որը հիմնականում բացատրական բնույթ ունի, այն էլ բացատրված են ոչ բոլոր բառերը, այլ հիմնականում փոխառությունները: Այսպես, միայն Ա տառի բառահողվածների համեմատությամբ վերցրած՝ մեր բառարանն ընդգրկում է 52 նոր բառ, 4 նոր իմաստ: Բացի դրանցից՝ մեր բառացանկում ընդգրկված չեն 10 բառեր, որոնք ՕԲ-ի բառապաշարում չենք հանդիպել: Դրանք թերևս առանձնացվել են այն հատվածներից, որոնք հետագա դարերում են ավելացվել, և որոնք բառամթերքը մենք չենք քննել:

**ԱՍԵՆԱԽՈՒԹՅԱՆ ՓՈՐՉԱՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ:** Ատենախոսությունը քննարկվել է և հրապարակային պաշտպանության երաշխավորվել ԵՊՀ հայոց լեզվի պատմության ամբիոնում: Ատենախոսության հիմնադրույթներն արտացոլված են տպագրված հոդվածներում:

**ԱՍԵՆԱԽՈՒԹՅԱՆ ԿՈՒՈՒՑՎԱԾՔԸ ՈՒ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ:** Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացությունից: Աշխատանքի վերջում տրված են համառոտագրությունների ու օգտագործված գրականության ցանկերը և հավելված-բառարանը: Ատենախոսության ծավալը 148 էջ է (ևս 50 էջ կազմում է բառարանը):

**«Ներածություն»** բաժնում հիմնավորված են ատենախոսության թեմայի արդիականությունն ու նշանակությունը, ուրվագծված են հետազոտության արդյունքները և դրանց հասնելու մեթոդները: Ներածության մեջ նաև հարկ ենք համարել համառոտ անդրադառնալ 15-րդ դարի նշանավոր բժշկապետ Ամիրոսլիմ Լմասիացու կյանքին և բժշկագիտական աշխատություններին, ինչպես նաև այդ աշխատությունների սկզբնաղբյուրների հարցի քննությանը:

**Գլուխ 1. Բառակազմական մի քանի հիմնադրույթների շուրջ:** Ատենախոսության առաջին գլխում ներկայացրել ենք այն գիտական սկզբունքները, որոնցով առաջնորդվել ենք մեր ուսումնասիրության բնագրի բառակազմությունը քննելիս: Այդ սկզբունքներից առաջինն առնչվում է պարզ և բաղադրյալ բառերի տարբերակմանը՝ ըստ լեզվի զարգացման տվյալ փուլում գործող բառակազմական օրինաչափությունների: Հաջորդ սկզբունքը կապված է բառակազմական կաղապարների առանձնացման հետ: Ատենախոսության մեջ բառակազմական կաղապարները բաժանել ենք երեք ենթախմբերի՝ բառաբարդման, ածանցման և բարդածանցավոր բառերի: Իհարկե, բոլոր բարդածանցավոր բառերը, անկախ իրենց կազմի մեջ մտնող ձևույթների թվից, ի վերջո, բառակազմական վերջին քայլում բաժանվում են երկու մասի՝ սերող հիմքի (տվյալ դեպքում երկրորդային սերող հիմքի) և կան արմատի, կան ածանցի: Վերջիններս կարող են ավելանալ սերող հիմքի և՛ սկզբից, և՛ վերջից: Փաստորեն, բոլոր դեպքերում բառակազմական վերջին քայլում ունենում ենք բառակազմական երկու եղանակներից մեկը՝ բառաբարդում կան ածանցում, այսինքն՝ կան ածանցավոր բառն է բարդվում, կան բարդ բառն է ածանցվում: Սակայն մեր աշխատանքում նպատակահարմար համարեցինք բարդածանցավոր բառերը ներկայացնել առանձին խմբով՝ չանտեսելով, իհարկե, նաև այս բառերի սերման պատմությունը: Ուստի յուրաքանչյուր կաղապարում կիրառել ենք փակագծեր, որոնցից պարզ է դառնում յուրաքանչյուր բառում բառակազմական վերջին քայլում երկրորդային սերող հիմքին արմատ, թե ածանց է ավելացել: Հաջորդ հարցն առնչվում է ածանցավոր բառերին: Հաշվի առնելով ածանցների առանձնահատկությունները՝ ածանցման կաղապարներում նշել ենք յուրաքանչյուր ածանցի բառակազմական իմաստը, փոխակերպական արժեքը և թե ինչ խոսքի մասի պատկանող սկզբնահիմքի է միացել: Ատենախոսության առաջին գլխում անդրադարձել ենք նաև կիսափոխառությունների-կիսապատճենումների առանձնացման անհրաժեշտությանը: Դրանք 1 օտար բաղադրիչ+մայրենի լեզվի ձևույթ կաղապարով կազմություններ են, որոնք ոչ թե փոխառություններ, այլ միջինհայերենյան նորակազմություններ ենք համարել: Դրանց մեծ մասը բայակերտումներ են՝ հարադարավոր բայեր, որոնց ուսումնասիրությունը շատ կարևոր է հայերենի զարգացման տվյալ շրջանում որևէ օտար լեզվի ազդեցությունն ավելի ճշգրիտ ներկայացնելու համար:

**Գլուխ 2. Բառաբարդումը և ածանցումը «Օգուտ բժշկութեան» երկում:** Երկրորդ գլուխը բաղկացած է հինգ ենթագլուխներից: Առաջին ենթագլխում *«Բառաբարդման կաղապարներ»*, քննության ենք առել «Օգուտ բժշկութեան» երկում

Ա.Ամասիացու գործածած բոլոր բարդ բառերը: Նշենք, որ բարդ բառերի կազմության մեջ, խոսքիմասային պատկանելության տեսակետից, հիմքերի առյուծի բաժինը պատկանում է անվանական (գոյականական) և բայական հիմքերին, ընդ որում, բաղադրյալ բառերի մեծագույն մասում անվանական հիմքը համընկնում է ուղղական հոլովին, իսկ բայական հիմքը՝ բայարմատին: Բայարմատը հիմնականում համընկնում է կամ պարզ բայերի ներկայի ձևաբանական հիմքին (օր.՝ *ստանդրախանգաղ*<sup>2</sup>, *խափանումն* (79), *փոփոխումն* (70)), կամ կատարյալի արմատական հիմքին (օր.՝ *ուսումն* (5), *մեռած* (12)):

Մի շարք բառերում (օր.՝ *աստուածավախ* (48), *գրագիրութիւն* (41), *իմաստասէր* (17), *ծեռնագործ* (183), *միածին* (8), *որդեծնութիւն* (96)), ընդգծված արմատները համարել ենք բայարմատներ, քանի որ չնայած այն բանին, որ կան ձևով նրանց համընկնող գոյականներ, սակայն մեր օրինակներում այդ բառերի՝ գործողություն ցույց տալու իմաստը բավական ակնհայտ է արտահայտված: Ավելին, այդ արմատները գերազանցապես խնդրային (*միածին* և *ծեռնագործ* բառերի դեպքում՝ պարագայական) հարաբերությամբ են կապված առաջին բաղադրիչների հետ: Այսինքն՝ այսպիսի դեպքերում հաշվի ենք առել ոչ միայն արտաքին, այլև ներքին բառակազմության հնարավորություններ:

ՕԲ-ում գործածված համադրական բարդությունները բաժանել ենք երկու մեծ խմբի՝ հողակապով և անհողակապ բարդությունների: Ըստ այդմ՝ հողակապով բարդությունների հիմնական կաղապարը կլինի S<sub>1</sub>S, իսկ ենթակաղապարները՝ S<sub>1</sub>S, S<sub>1</sub>S<sup>f</sup>, S<sub>1</sub>S<sup>f</sup>, S<sub>1</sub>S (կամ S<sub>1</sub>S), S<sub>1</sub>S, S<sup>f</sup>S, S<sup>f</sup>S<sup>f</sup>, S<sup>f</sup>S<sup>f</sup> և S<sub>1</sub>S<sup>f</sup>, ScS, ScS, SpS, SpS, SpS<sup>3</sup>: S<sup>f</sup>S, S<sup>f</sup>S<sup>f</sup>, S<sup>f</sup>S<sup>f</sup> և S<sub>1</sub>S<sup>f</sup> ենթակաղապարներով օրինակներ մեր ընտրանքում չեն հանդիպում: Հողակապով բարդությունների շարքում ներկայացրել ենք նաև շաղկապներով և նախդիրներով կազմված այնպիսի բաղադրությունները, որոնք իրականում վերլուծական կազմություններ են, սակայն կազմվել են բառակազմական միևնույն կաղապարով, ինչ հողակապով բարդությունները: Այսպիսով՝ որպես վերլուծական բաղադրություններ՝ առանձին քննել ենք միայն հարադրավոր բայերը: Բառակազմության բաժնում նպատակահարմար ենք համարել բերել ՕԲ-ում հանդիպող և՛ գրաբարյան, և՛ միջինհայերենյան բոլոր բաղադրությունները՝ յուրաքանչյուր կաղապարի գործառական բեռնվածությունը ճշգրիտ ներկայացնելու համար, պարզապես դրանցից թավ տառերով առանձնացրել ենք միջինհայերենյան կազմությունները:

Ստորև բերվող աղյուսակ 1-ում կներկայացնենք ՕԲ-ում գործածված բարդ բառերի բառակազմական կաղապարներն իրենց թվային արժեքով ու տոկոսային հարաբերակցությամբ (աղյուսակի նմուշը վերցված է Լ.Հովսեփյանի «Գրաբարի բառակազմությունը» գրքից):

---

<sup>2</sup> Ամիրտովլաթ Ամասիացի, Օգուտ բժշկութեան, Երևան, 1940, էջ 151: Այս և հաջորդ օրինակները վերցված են վերոհիշյալ գրքից: Այսուհետև փակագծերում կնշվի միայն էջը:

<sup>3</sup> Սրանցում S-ը հնչյունափոխված հիմքն է, j-ը՝ հնչյունափոխված հողակապը, S<sup>f</sup>-ը՝ քերականական ձևավորում ունեցող կամ թեքությավորմամբ կազմված հիմքը, S<sub>1</sub>S-ը՝ արմատի կրկնությամբ կազմված բարդությունը, c-ն՝ շաղկապը, p-ն՝ նախդիրը:

Կաղապար	Օրինակներ	Քանակը	Տոկոսային հարաբերակցությունը
SjS	առատախօս	25	14.7
SjS	աստղաբաշխ	32	18.4
SjS <sup>†</sup>	խրատատու	4	2.4
SjS <sup>†</sup>	կարճահար	2	1.2
SjS (SjS)	գինեջուր	4	2.4
SjS	կերակուր	1	0.6
SjS	մեծամեծ	1	0.6
ScS	հալւնաշ	2	1.2
ScS	ցեղ ու ցեղ	1	0.6
SpS	գլխիբաց	3	1.75
SpS	գունզգուն	6	3.5
<b>Ընդամենը</b>		<b>81</b>	<b>47.3</b>
SS	աղանորդի	39	22.5
SS	աղջկմայր	18	10.6
SS <sup>†</sup>	ջրեզեր	3	1.8
SS <sup>†</sup>	երկոտասան	1	0.6
SS	աղվորզրուց	3	1.8
S'S	նստոյտեղ	3	1.8
S-S	կէս կէս	14	8.3
S'-S'	երկուք երկուք	1	0.6
S-S (թվական)	Ե Ե	8	4.7
<b>Ընդամենը</b>		<b>90</b>	<b>52.7</b>
<b>Բառերի ընդհանուր թիվը</b>		<b>171</b>	<b>100</b>

Հաջորդ աղյուսակում (աղյուսակ 2) ներկայացրել ենք տարբեր խոսքի մասերին պատկանող սկզբնահիմքերի հնարավոր զուգորդությունները: Բաղադրիչների խոսքիմասային պատկանելությունը որոշելիս դժվարություններ չեն առաջանում այնպիսի դեպքերում, երբ այդ բաղադրիչները նաև անկախ գործածություն ունեն կամ դրանցում խոսքիմասային փոխանցումներ չեն կարող կատարվել: Օր.՝ *մայրաքաղաք* - Գ+Գ, *խրատատու* - Գ+Բ: Սակայն մի շարք դեպքերում որոշակի դժվարություններ են առաջանում, որոնք կապված են խոսքի մասերի միջև փոխանցումների և անվանաբայական արմատական համանունության հետ: Անվանաբայական համանունության մասին արդեն ասվեց (*աստուածավախ, իմաստասէր, գրագիրութիւն* և այլ բառերի հետ կապված):

Արմատական համանունության նույնպիսի խնդիր կարող է առաջանալ նաև ածական և բայական հիմքերի համընկման ժամանակ: Օր.՝ *մաղծախառն, արինխառն* բառերում դժվար է պարզել՝ երկրորդ սերող հիմքը *խառնել* բայի արմատն է, թե *խառը* ածականը: Տեքստային օրինակներում այդ բառերը կարելի է հասկանալ և՛ *մաղծի հետ խառը*, և՛ *մաղծին խառնված*: ՄԴԲ-ում արձանագրված իմաստներն են մի դեպքում «*մաղծի հետ խառն*», մյուս դեպքում «*արյան հետ խառնված*»: Մենք նախապատվությունը տվել ենք բայական իմաստին և այդ բառերը տեղադրել ենք Գ+Բ կաղապարի մեջ:

Հիմքերի խոսքիմասային պատկանելությունը որոշելիս բախվել ենք նաև մի ընդհանուր դժվարության՝ կապված հայերենում ածականի և մակբայի ձևաբանորեն չտարբերակված լինելու հետ: Օր.՝ *աղվոր, առատ* բառերը հավասարապես և՛ ածական են, և՛ մակբայ, չնայած լեզվաբանների մի մասը դրանք համարում է ածականներ, որոնք կարող են կիրառվել նաև մակբայաբար: Մենք, սակայն, այսպիսի դեպքերում հաշվի ենք առել բաղադրիչների բառակազմական իմաստները և նրանց միջև եղած շարահյուսական կապերը: Հետևաբար, եթե այդ հիմքերը բաղադրվել են գոյականի հետ, ուրեմն ածական են, իսկ եթե բայահիմքերի հետ, մակբայ են: Օր.՝ *աղվորներես* - Ա+Գ, իսկ *աղվորգրուց* – Մ+Բ, քանի որ վերջինս համատեքստից հասկացվում է որպես «գեղեցիկ գրուցող», իսկ բառարանային իմաստն է «գեղեցիկ խոսող, վայելչախոս»:

Սակայն դեռևս զրաբարում կային մի քանի բառեր, որոնք կարծես հակասում են վերոնշյալ սկզբունքին. դրանցում գոյականները մակբայ լրացում են ստացել: Օր.՝ *յաւետահրաշ, յարակոյս, հանապազար* և այլն: Ս.Գալստյանն արդի հայերենի ածանցմանը նվիրված իր գրքում Գ+Մ, Մ+Գ կաղապարները քննելիս նշում է, որ մակբայը գոյականի հետ չի կարող բառակապակցություն կազմել, հետևաբար Գ+Մ, Մ+Գ կաղապարներով բարդ բառերի կազմությունը բացառվում է<sup>4</sup>: Թեև մեր ընտրանքում Մ+Գ կաղապարով կազմություններ չեն եղել, սակայն, ինչպես տեսանք, զրաբարում արդեն կային այդպիսի կազմություններ, իսկ մեր ուսումնասիրության մեջ հանդիպում են Գ+Մ կաղապարով բարդություններ (*ակռատակ, գլխիվար, գլխիվեր, քիկնամէջ, օրմէջ*):

## Աղյուսակ 2

Հիմքերի կարգային պատկանելությունը	Օրինակներ	Քանակը	Տոկոսային հարաբերակցությունը
Գ+Գ	մայրաքաղաք	68	39
Գ+Ա	ցորեկկուր	4	2.4
Գ+Բ	իմաստասեր	21	12.5
Գ+Մ	գլխիվեր	5	3
Ա+Գ	անուշահամ	17	10.1
Ա+Ա	մեծամեծ	5	3
Թ+Գ	չորեքդիհ	5	3
Թ+Բ	միածին	1	0.6
Թ+Թ	երկոտասան	12	7.2
Դ+Գ	այնչափ	10	6
Դ+Դ	մէկայլ	2	1.2
Դ+Մ	միւսանգամ	1	0.6
Բ+Գ	նստատեղի	5	3
Բ+Բ	հալևմաշ	2	1.2
Մ+Բ	առատախօս	6	3.6
Մ+Մ	զատեզատ	6	3.6
<b>ԸՆդամներ</b>		<b>171</b>	<b>100</b>

<sup>4</sup>Տե՛ս Ս.Գալստյան, Ածանցումը և ածանցները ժամանակակից հայերենում, Երևան, 1978, էջ 21-23:



Երկրորդ ենթագլխում «*Հարադրավոր բայեր*», քննվել են ՕԲ-ում հանդիպող հարադրավոր բայերը, դրանք ներկայացվել են ըստ հարադրի խոսքիմասային պատկանելության, նաև առանձնացվել են դարձվածքային միավորները: ՕԲ-ի գրաբարյան և միջինհայերենյան հարադրավոր կազմություններն առանձնացնելիս առնչվել ենք այնպիսի խնդրի, ինչպիսին է հարադրավոր բայերի բառարաններում ոչ ամբողջությամբ արձանագրված լինելու փաստը: «Միջին հայերենի բառարան»-ում (այսուհետև ՄՅԲ) հարադրավոր բայերի նկատմամբ երկակի մոտեցում է ցուցաբերվել: Մի դեպքում հարադրավոր բայն ամբողջությամբ ներկայացված է որպես գլխաբառ (օր.՝ *աղօթք անել, ամուսնոյ տալ, անեղբայր առնել, ձեռն ընկնել, ձերպակալ առնել, յանձն ստանալ* և այլն), մյուս դեպքում այն բերվում է որպես բաղադրիչներից մեկի՝ որպես գլխաբառի առանձին կիրառություն (օր.՝ *գանգատ այնել* բայը՝ *այնել* գլխաբառի տակ, *արեւն ասել* բայը՝ *արեւ* գլխաբառի տակ, *յուլութիւն այնել* բայը՝ *այնել* գլխաբառի տակ և այլն): Վերջիններիս կերպ են ներկայացվում նաև բազմաթիվ դարձվածքներ (օր.՝ *ելանել ի վեր ի գլուխն*՝ հարբեցնել, *երթալ ի միտ ի վար*՝ խելքը կորցնել, *հանել ի քամին*՝ սպառել և այլն): Սակայն ՄՅԲ-ում առավել հաճախ բերվում են հարադրավոր բայերով նախադասություններ՝ առանց նշելու դրանցում գործածված հարադրավոր բայը: Օր.՝ *կենալ* բայի տակ բերված նախադասության մեջ կա *ծառայ կենալ* հարադրավոր բայը, *հասնիլ* բայի տակ՝ *հասնիլ ի վերայ* բայը և այլն: Այսպիսի օրինակները բավականին շատ են: Մեր աշխատանքում փորձել ենք սահմանազատել գրաբարյան և միջինհայերենյան կազմությունները: Այն հարադրավոր բայերը, որոնք նշված չեն գրաբարյան բառարաններում և իրենց բաղադրիչների հատկապես քերականական ձևավորմամբ հարազատ են միջին հայերենին, բայց արձանագրված չեն ՄՅԲ-ում, մենք համարել ենք միջինհայերենյան նորակազմություններ: Ըստ այդմ՝ ՕԲ-ից առանձնացրած **256** բայերից միայն **12**-ն են գրաբարյան *արտաքս ելանել* (34), *շուրջ գալ* (313) // *շուրջ գալ* (11), *գիծութիւն գալ* (513), *ի գործ ածել* (57), *խրատ տալ* (157), *ծաղր առնել* (52), *ծոււր դնել* (473), *կին առնուլ* (158), *միտ դնել* (6), *արթուն կենալ* (58), *պատրաստ կալ* (431), մնացած **244**-ը միջինհայերենյան կազմություններ են: Դրանցից են՝ *խելքն երթալ* (332), *ոխ պահել* (55), *ցաւ ընծայել* (177), *հրոյ վառիլ* (50), *ի կենացս գերծանիլ* (151), *ի մտաց երթալ* (157), *անյայտ առնել* (462), *ծրի խօսել* (501), *բոլոր պատել* (31), *մտիկ դնել* (55) և այլն: Այս իրողությունը կապված է ՕԲ-ի լեզվի և հեղինակի ոճի հետ: Հարադրավոր բայերի կիրառությունը թեև հատուկ էր հայոց լեզվին ամենավաղ շրջանից, սակայն միջին հայերենում ավելի լայն տարածում ուներ, որը պայմանավորված էր առաջին հերթին հարադրավոր բայերի իմաստային առանձնահատկություններով, խոսքին ավելի կենդանի շունչ, թարմություն, ազատություն տալու հատկությամբ, հետևաբար կենդանի խոսակցական լեզվում ավելի տարածված լինելու փաստով:

Երրորդ ենթագլխում «*Ածանցման կաղապարներ*», քննել ենք ՕԲ-ի բաղադրյալ բառերը՝ ըստ նախածանցների, վերջածանցների և բայածանցների: Նախածանցման պարզագույն կաղապարներում՝ *aS*, *aJS* հանդիպել են միայն *համա*- նախածանցը *համախոտ* բառում (30) և *ան*- ժխտական նախածանցը, որով կազմված 25 բառերից 6-ը միջինհայերենյան կազմություններ են (*անխախտ* (328), *անխաղաղ* (285), *անխել* (81), *անկուտ* (119), *անհալ* (366), *անպակ* (353)), մնացածը գրաբարից ավանդված բառեր են: Վերջածանցման *Sa* և *Sja* կաղապարները կազմվել են 43 վերջածանցներով, որոնցից 6-ը միջինհայերենյան ածանցներ են՝ *-եց* (*այրեց* (511), *ուռեց* (458)), *-t*

(արծիճէ (151)), *-լի* (եղլի (76), մսլի (412)<sup>5</sup>, տափակլի (73)), *-ծու* (ցանծու (345)), *-ման* (զմացման (273)), *-վածք* (եփվածք (53), յօրհնվածք (36)), իսկ մյուսները հանդես են գալիս ինչպես գրաբարյան բառերում, այնպես էլ միջինհայերենյան նորակազմություններում: Բազմաձևաց կամ հարածանց բառերից ՕԲ-ում հանդիպում են առանվազուց երկու ածանցով կազմված բառեր, որոնք ներկայացրել ենք a(Sa) (աներևութ (42), անժմու (390)), (aS)a (անխելութիւն (504), ընդունելի (444)) և (Sa)a կաղապարներով (բնականութիւն (34), ուռեցութիւն (52), հալոդական (358), հոտանելիք (144), կանգնման (273) և այլն): Բայածանցներից քննել ենք միայն հիմքակազմ ածանցները՝ սոսկածանցները, քանի որ դրանցով կազմված բայերը բառարանային միավորներ են, բայի սկզբնաձևերը, և նրանց հետ են կապված բային հատուկ մի շարք քերականական իրողություններ: Սոսկածանցներից *-ան-* ածանցով (առանց նրա հնչյունափոխված *-ն-*ով տարբերակի) 27 բայ ենք առանձնացրել, որոնցից 9-ը կազմվել են միջին հայերենում: Ի տարբերություն *-ան-* ածանցի, որը հանդես էր գալիս և՛ *ա*, և՛ *ե*, և՛ *ի* լծորդության բայերի կազմում, *-են-* ածանցը միայն *ա* լծորդության բայեր է կազմում և գրաբարում ավելի քիչ գործուն է, քան *-ան-* ածանցը: Սակայն միջին հայերենում *-են-* ածանցը որոշակի կենսունակություն է ձեռք բերում և մի շարք նորակազմություններով հարստացնում է միջին հայերենի բառապաշարը: ՄԲ-ն *-են-* ածանցով կազմված բազմաթիվ բայեր է վկայում:

ՕԲ-ում *-են-* ածանցով կազմված 14 բայեր ենք առանձնացրել, որոնցից միայն **հինգ** են գրաբարյան ձևեր, մնացած **ինը** միջինհայերենյան կազմություններ են: Դրանք են.

գրաբարյան		միջինհայերենյան	
գիտենալ (20)	ուռենալ (11)	<b>թուենալ (468)</b>	<b>պիտենալ (7)</b>
կանենալ (69)	քաղցենալ (232)	<b>ծարունալ (319)</b>	<b>վախենալ (144)</b>
մերձենալ (27)		<b>կարենալ (186)</b>	<b>ուզենալ (7)</b>
		<b>պաղենալ (306)</b>	<b>ունենալ (510)</b>
		<b>հարբենալ (112)</b>	

*-ն-* ածանցը ծագմամբ կապվում է *-ան-* և *-են-* ածանցների հետ: Միջին հայերենում այս ածանցն ավելի շատ կենսունակություն է ձեռք բերում՝ որպես *-ան-*, *-են-* ածանցների միջին հայերենին բնորոշ հնչյունափոխության արդյունք: Միջին հայերենում *-ն-* ածանց ունեցող բայերի մեծագույն մասն *ա* լծորդության է: Այդ բայերի գերակշիռ մեծամասնությունը շարունակում էր գործածվել չհնչյունափոխված ձևերի հետ կողք կողքի: ՕԲ-ում *-ն-* ածանցով 50 բայ ենք առանձնացրել, որոնցից 32-ը գործածվել են նաև անհնչյունափոխ *-ան-*, *-են-* ածանցներով: Դրանցից են՝ *անցնիլ* (13)-*անցանիլ* (155), *աւելնալ* (250) - *աւելանալ* (94), *բունիլ* (68) - *բուսանիլ* (21), *գիտնալ* (31) - *գիտենալ* (458), *գտնուլ* (229) - *գտանել* (5), *դժարնալ* (455) - *դժարանալ* (285), *ծարանալ* (281) - *ծարունալ* (319), *կակեղնալ* (201) - *կակղանալ* (471), *կարճնալ* (83)-*կարճանալ* (470) և այլն: ՕԲ-ում գործածված մնացած 18 բայերից միայն *առնել* (12), *առնուլ* (154) բայերն են գրաբարյան կազմություններ, մյուս 16-ից 7-ը

<sup>5</sup> *-Լի* ածանցը միջինհայերենյան ածանց է, առաջացել է *լի* արմատից՝ իմաստի մթազմմամբ: Սրանով կազմված բառերը ածանցավոր ենք համարել, քանի որ դրանցում *լի* բառն արդեն կորցրել է իր բառային իմաստը և բառակազմական իմաստ է ձեռք բերել: Այն կարելի է հոմանիշ համարել *-եղ*, *-ոտ* ածանցներին: Օր.՝ *մսլի-մստտ*, *եղլի-յուղոտ* և այլն: Այս ածանցների նման, *-լի* ածանցն ունի «սկզբնահիմքի ցույց տված առարկայից կամ հատկանշից շատ ունեցող» բառակազմական իմաստը: Ածականակերտ ածանց է:

գրաբարյան բայերի՝ միջինհայերենյան հնչյունափոխությամբ կազմություններ են՝ *երևնալ (503), իջնուլ (76)/իջնել (225), լաննալ (110), հովնալ (325), նօսրնալ (111), սևնալ (189), քարնալ (183)*, իսկ **9-ը** բուն նորակազմություններ, որոնց անհնչյունափոխ տարբերակները գրաբարում չկան: Դրանք են *աղեկնալ (188), աւաղնալ (506), բարակնալ (471)/բարկնալ (80), խածնել (516), կաթնիլ (12), կապուտնալ (95), շանթնալ (95), ուժովնալ (166), տափկնալ (39)*:

-չ- ածանցով ընդամենը հինգ բայ ենք գտել ՕԲ-ում: Դրանցից *ուռչիլ* բայը (151) գործածվել է նաև *ուռնալ (125)* և *ուռենալ (197)* տարբերակներով, երկուսը գրաբարյան կազմություններ են՝ *հանգչիլ (150), փախչիլ (30)*, մյուս երկուսը՝ նորակազմություններ՝ *կաչիլ (185), փակչել (186)*:

Երկրորդ գլխի չորրորդ ենթազվխում՝ «*Բարդածանցավոր բառեր*» բաժնում, մենք նպատակահարմար համարեցինք բարդածանցավոր բառերը ներկայացնել առանձին խմբով՝ չամեսեսելով, իհարկե, նաև այս բառերի սերման պատմությունը: Ուստի յուրաքանչյուր կադապարում դարձյալ կիրառել ենք փակագծեր, որոնցից պարզ է դառնում՝ յուրաքանչյուր բառում բառակազմական վերջին քայլում երկրորդային սերող հիմքին արմատ, թե ածանց է ավելացել:

ՕԲ-ից առանձնացրած միջինհայերենյան բարդածանցավոր նորաբանություններից են՝ *ականջացաւութիւն (12), երկկանցաւութիւն (14), թըքացաւութիւն (13), լերդացաւութիւն (86), փայծաղնացաւութիւն (89), գրագիրութիւն (41), ծաղկագործութիւն (41), միջացաւութիւն (94), գինեխմութիւն (57), բանադրանք (5), մարդակազմութիւն (20)* և այլն:

Երկրորդ գլխի հինգերորդ ենթազվխում՝ «*Կիսափոխառություններ-կիսապատճենումներ*» բաժնում, ներկայացրել ենք յուրօրինակ բառակազմություններ՝ հիմնականում բայակերտումներ, որոնք ստեղծվել են մեր լեզվին հատուկ բառակազմական կանոններով: Դրանց մեծագույն մասը՝ թվով 43-ը, բայեր են, որոնցից միայն 7-ն են համադրական կազմություններ, իսկ 36-ը հարադրավոր բայեր են, ընդամենը 8-ը՝ գոյականներ, 5-ը՝ ածականներ, և 2-ը՝ մակբայներ: Այդ բառերից են՝ *զախմ հասնել (213)* - պրսկ. *zāxm*՝ հարված բառից (վմաս հասնել, վմասվել) *զահմաթիլ (51)* - արաբ. *ahmat*՝ նեղություն բառից (նեղվել) *զենարար (18)* - պրսկ. *ziyan*՝ վմաս բառից (վմասակար) *լատիֆութիւն (220)* - արաբ., պրսկ. *latif*՝ մեղմ, քնքուշ բառից (մեղմություն) *խալսիլ (34)* - արաբ. *xalas*՝ ազատում բառից (փրկվել, ազատվել)/խալխիլ (62) *պիսակոտ (96)* - պիլվ. *pēsak*՝ բորոտ բառից (բորոտ) *սարսամացաւ (81)* - պրսկ. *sār-sam*՝ մենինգիտ բառից (ուղեղապարկի բորբոքում) *սաւտաոտ (52)* - արաբ. *sawdā*՝ լեղի բառից (մեկսամաղծոտ) *սուստկալ(94)* - արաբ. *sust*, պրսկ. *sost*՝ թույլ բառից (նվաղել) *քիչ քիչ (198)* - պրսկ. *kič*՝ սակավ բառից և այլն:

**Գլուխ 3. «Օգուտ բժշկութեան» երկի բառապաշարի շերտերն ըստ ծագման:** Ատենախոսության այս գլուխը բաժանված է երկու ենթազվխների, որոնցից երկրորդն ունի չորս ենթաբաժին: Առաջին ենթազվխում՝ «*Գրաբարից ավանդված բառեր*», ամփոփված են գրաբարի բառապաշարի այն ամենակենսունակ տարրերը, որոնք պահպանվել են նաև միջին հայերենում: Դրանք առաջին հերթին մեծ կենսունակությամբ և բառակազմական լայն հնարավորություններով օժտված այն բառերն էին, որոնք կարելի է անվանել համահայկական բառեր<sup>6</sup>, և որոնք բնական ճանապարհով

<sup>6</sup> Եզրույթը գործածել է Է.Աղայանը «Ընդհանուր և հայկական բառագիտություն» աշխատության մեջ, Երևան, 1984, էջ 120:

կենդանի խոսակցական լեզվի միջոցով, գրաբարից փոխանցվեցին միջին հայերենին: Այդպիսի բառերից ՕԲ-ում գործածվել են *ախոռ (52), ականջ (31), բաժին (5), բերան (13), գառն (7), գուշակել (23), ընտրել (6), թթու (23), կոպ (181), հող (13)* և հարյուրավոր այլ բառեր: Գրաբարյան բառաշերտի մեջ են մտնում նաև այն բառերը, որոնք միջին հայերենի բառապաշար մուտք գործեցին գրաբարի գրական ազդեցության միջոցով: Այդպիսի բառերը կարելի է անվանել ներքին փոխառություններ: Դրանցից ՕԲ-ում գործածվել են *ամենեսեան (5), արջասպ (99), ծուճր դնել (473), հանապազ (17), հնոց (50), յորժամ (5), ճաղատ (108), փառաւորել (5)* բառերը և այլն: Միջին հայերենի գրաբարյան բառաշերտի մեջ են մտնում նաև այն փոխառությունները, որոնք հայոց լեզվի բառապաշար են մուտք գործել գրաբարում՝ մինչև 12-րդ դարը: Այդպիսի բառերից ՕԲ-ում հանդիպում են նաև *ազոխ (64), անանուխ (7), ահուկ՝ վնաս (37), բժիշկ (5), դմակ (368), խորշակ (46), կաղամբ (409)* բառերը, որոնք գրաբարյան շրջանում փոխառվել են պարսկերենից և այլն:

Երկրորդ ենթազուխը՝ «*Միջինհայերենյան բառաշերտը*», բաժանված է չորս ենթաբաժինների.

ա) *Բնիկ կամ արմատական միջինհայերենյան բառեր*. սրանք նախ այն բառերն են, որոնք հաստատապես եղել են գրաբարի բառապաշարում, սակայն գրավոր աղբյուրներում առաջին անգամ հանդիպում են միջին հայերենում: Այդպիսի բառերը պահպանվել են ժողովրդախոսակցական լեզվում ու բարբառներում և գրավոր լեզվում առաջին անգամ գործածվել են միջին հայերենի շրջանում: Ուստի այդ հնագույն բառերը կոչվում են միջինհայերենյան բառեր: Օր.՝ դրանցից ՕԲ-ում գործածվել են *թուշ (71), կեռ (149), կտրիճ (398)* բառերը: Դրանցից *թուշ, կեռ* բառերը բնիկ բառեր են: Պարզ է, որ հնդեվրոպական ծագման բառերը պետք է որ նախ անցնեին գրաբարին, ապա նոր միայն միջին հայերենի բառապաշարին: Իսկ *կտրիճ* բառը կազմված է *-իճ* ածանցով, որը դեռևս գրաբարում արդեն կենսունակ չէր ու չէր կարող նոր բառ կազմել միջին հայերենում: Այս խմբի բառերը որոշակի վերապահությամբ կկոչենք բնիկ կամ արմատական միջինհայերենյան բառեր: Ասում ենք որոշակի վերապահությամբ, քանի որ, ինչպես ստորև կտեսնենք, եթե դրանց մի մասը հնդեվրոպական ծագման արմատներ են, ապա մյուս մասում զգացվում է օտարահունչ լինելը, սակայն ստուգաբանական հետազոտությունները մինչ այժմ չեն պարզել այդ բառերի փոխատու աղբյուրը: Օր.՝ *արմասպ (84)*՝ արևելյան քանու տեսակ, *ասքարի՝* դեղամյուսի տեսակ (137) և այլն: Վերջիններս կոչվում են նաև ենթաշերտային բառեր: Դրանք կարող էին հնագույն ժամանակներից գրաբարի խոսակցական լեզվին անցած լինել տարբեր ցեղերի ու ժողովուրդների լեզվի բառապաշարից, ապա պահպանվելով հայերենի բարբառներում՝ միջին հայերենի շրջանում կարող էին մուտք գործել գրական լեզվի մեջ: ՕԲ-ում գործածված այդպիսի բառերից են *ազիզին (218)* մի տեսակ ակնաթոցոց, *դախրայ (354)*՝ թարախ/*դախիրայ (355), դամոն (95)*՝ դամոնների ծառի պտուղը, *դարիսեն (151)*՝ դարչին, *զամատին (189)*՝ հավանաբար զմելին, *զուկի (97)*՝ անուշահոտ խեժ, որը ստանում են ստյուրակ ծառից, *թուսայ (14)*՝ մաշկի բորբոքում, *խարմիան (408)*՝ կղբի սեռական գեղձերից արտազատվող շիթ, հեղուկ, *կովտայ (50)*՝ մարմին, *հերքուն (52)*՝ մաշկային հիվանդություն, *հունեսայ (84)*՝ հյուսիսային քամու տեսակ, *դանդայ (514)*՝ սորմ, *մահրայ (84)*՝ արևմտյան քամու տեսակ և այլն:

բ) *Յնչյունափոխված և իմաստափոխված գրաբարյան բառեր*. ընդհանրապես, գրաբարյան այն բառերը, որոնք միջին հայերենում որոշակի հնչյունափոխությամբ կամ իմաստափոխությամբ են հանդես գալիս, միջին դիրք են գրավում գրաբարյան և միջինհայերենյան բառաշերտերի միջև, քանի որ իբրև բառեր՝ դրանք գրաբարյան են, բայց իրենց նոր հնչյունային կազմով կամ նոր իմաստավորումներով՝ միջինհայերեն-

յան: Սակայն լայն առունով՝ այդ բառերը, հատկապես իմաստափոխվածները, կարելի է համարել նորաբանություններ (իմաստային նորաբանություններ), քանի որ լեզվում նորաբանություններ են կոչվում ոչ միայն նոր բառը, կայուն բառակապակցությունը կամ դարձվածքը, այլև բառի նոր իմաստը, բառագործածության նոր իրողությունը<sup>7</sup>: Այդպես նաև «Լեզվաբանական բառարանում» նորաբանություն են համարվում լեզվի մեջ մտած և դեռևս ընդհանրացում չստացած նոր բառերը, դարձվածքները, ոճերը, քերականական յուրահատկությունները և նոր իմաստավորում ստացած բառերը<sup>8</sup>:

Հնչյունափոխական երևույթներն ընդգրկում են և՛ ծայնավորական, և՛ բաղաձայնական համակարգերը, ընդ որում հնչյունափոխվում են ոչ միայն *ու, ի, ը* ծայնավորները: Միջին հայերենում խախտված է *ա, ե, ո* ծայնավորների երբեմնի գրաբարյան կայունությունը: Դրանք սղվում կամ հնչյունափոխվում են *ը-ի* ոչ միայն շեշտից գրված լիս, այլև բառերի անկախ և ուղիղ ձևերում, որի հետևանքով պատմական հնչյունափոխության արդյունքում, գրաբարյան բազմաթիվ բառեր միջին հայերենում հանդես են գալիս որոշակիորեն փոփոխված հնչյունային կազմով: ՕԲ-ում հանդիպում են հետևյալ օրինակները՝ *արտասուք>արցունք (204)*<sup>9</sup>, *բաղանիս>բաղնիս 58*, *եղունգն>ըղունկն (12)//ղունկ (54)*, *թքանել>թքնուլ (13)*, *ծարսել/իմ>ծարսիլ (13)*, *կատաղել>կատղել (515)*, *ճապաղել>ճապղիլ (25)*, *մանանխ>մաննխ (367)*, *մարգարիտ>մարգրիտ (183)*, *յստկել>ստկել (189)* և այլն: Այս շարքին պետք է դասել նաև *ու, ի, ը* ծայնավորների այնպիսի փոփոխությունները, որոնք խորթ են գրաբարին: Այդպիսիներից են *ուղեղն>ըղեղ (11)*, *թթուութին>թթութին (24)*<sup>10</sup>, *պուտուկ>պտուկ (32)*, *լիսեռն>լսեռ (42)*, *հեռի>հեռու (30)*, *ջիղն>ջեղ (248)*, *դժուար>դիժար (94)*, *ծճի>ծիճի (14)*, *յստակ>յիստակ (23)* և այլն:

ՕԲ-ում հանդիպում են նաև հնչյունների այնպիսի փոփոխություններ, որոնք լայն տարածում չունեն և սահմանափակվում են մի քանի բառերով: Դրանք են՝ *աղեղն>անեղ (29)*՝ հնչյունի անկում և տարեմանում, *կծծի>կծնի (18)*, *փայծաղն>փայծեղն (26)*՝ տարեմանում, *արմալ>ամբրալ (72)*՝ դրափոխություն և հնչյունի հավելում, *խստոր>սխտոր (97)*՝ դրափոխություն, *թոնիր>թունտիր (65)*, *սպիտակ>իսպիտակ (22)*, *կանաչ>կանանչ (113)*, *ոսկր>ոսկոր (20)* հնչյունի հավելում, *երիցուկ>իրիցուկ (109)* անմանում, *շուրջ>ժուռ (406)*, *ծոժորակ>ծոժրակ (105)*, *ծծումք>ծծում (113)*, *նստոյտեղի>նստոյտեղն (14)*, *պահք>պաք բռնել (61)*, *քարշել>քաշել (33)*՝ հնչյունի անկում, *ճանապարհ>ճանպա (49)*՝ *ճանփայ (42)*<sup>11</sup>, *յամել>յեմել (36)*՝ առնմանում, *ներքոյ>ներքև (6)*:

<sup>7</sup>Տե՛ս Է.Աղայան, նշվ. աշխ., էջ 169:

<sup>8</sup>Տե՛ս Հ.Պետրոսյան, Ա.Գալստյան, Թ.Ղարագուլյան, Լեզվաբանական բառարան, Երևան, 1975:

<sup>9</sup> Այս բառում միջնավանկի *ա-ի* անկման հետևանքով տեղի է ունեցել նաև հնչյունների բարդացում *ճ-ի* հավելմամբ:

<sup>10</sup>Սա *ու* ծայնավորի ամենաընդհանրական, լեզվական նորմա դարձած օրինաչափ փոփոխությունն է, երբ *ու* ծայնավորը ծայնավորից առաջ վերածվում է *վ* բաղաձայնի: Թեև միջնադարյան գրիչները ուղղագրության մեջ հաճախ նախապատվությունը տալիս էին գրաբարյան ձևին, այնուամենայնիվ հենց միջինհայերենյան սկզբնաղբյուրներում *ու>վ* փոփոխության բազմաթիվ վկայություններ կան ավանդված:

<sup>11</sup>Գրաբարյան *ճանապարհ* բառը երկրորդ վանկի *ա-ի* սղմամբ և բառավերջի *ր-ի* ու *հ-ի* անկմամբ նախ դարձել է *ճանպայ*, ապա *պ-ի* շնչեղիլացմամբ՝ *ճանփայ*: Հետագայում այս բառում նաև *ն>մ* փոփոխություն է տեղի ունեցել երկշրթնային *փ-ի* ազդեցությամբ, որը հանգեցրել է *ճանփա* բառին:

Գրաբարյան երկբարբառները հնչյունափոխվում են պարզ ձայնավորների՝ այ>ա - լան (35), ձան (48), յանժամ (189), վաթել (33), ոյ>ու - գուն (22), ընկուզ (166), կապուտ (411), պատուզ (221), ուռուց (260), իւ>ու - ալուր (98), եղջուր (38), ձուք (24), սուն (28), եւ<ե - եղ (98), եա<ե - դայել (66), լերդ (14), խարտեշ (46), հայեցք (27):

Միջին հայերենում օրինաչափ էր նաև ձայնորդահանգ *ն* ունեցող բառերի բառավերջի *ն*-ի անկումը: Օր.՝ եղեզ (250), ըղունկ (188), լսեռ (42), կաթ (98), ձուկ (447), ողաշար (29), ոսպ (60), ջրախառ (123), սիսեռ (67): Չայնեղ պայթականներն ու պայթաշփականները հանդես են գալիս ոչ օրինաչափ փոփոխություններով: Եթե կիլիկյան գրական հայերենում օրինաչափորեն ձայնեղները՝ խլանում, իսկ խուլերը՝ ձայնեղանում էին, ապա ՕԲ-ում դրանք միևնույն դիրքում մերթ մնում են անփոփոխ, մերթ փոխվում են: Օր.՝ բամբակ (74) - բամպակ (66), գինձ (87) - գինձ (105) և այլն: Ընդ որում, բոլոր օրինակներում (բացի *փթիլ* (28) և *ճանկայ* (42) բառերից, որոնցում խուլերը շնչեղխուլեր են դարձել՝ *տ>թ*, *պ>փ*), ձայնեղների խլացում է տեղի ունեցել: Այդ բառերն են *ականձ* (231), *բամպակ* (66), *բանճար* (72), *գինձ* (105), *ըղունկն* (12), *թանձոր* (22), *լինտ* (249), *խնձոր* (62), *խնտումն* (157), *հունտ* (100), *նաֆթ* (449), *պինտ* (24), *պնտել* (27), *պղինձ* (99) և այլն: Չայնեղների խլացումը ապացուցվում է նաև օտար բառերի հայերեն տառադարձությամբ: Գրաբարից ավանդված բազմաթիվ բառեր միջին հայերենում հանդես են գալիս նաև նոր իմաստներով, այսինքն՝ իմաստափոխությամբ: ՕԲ-ում հանդիպող գրաբարյան իմաստափոխված բառերը կարելի է բաժանել երկու խմբի.

1. Բառեր, որոնք նոր իմաստ են ստացել իրենց արտահայտած բառային իմաստն ընդլայնելու միջոցով:

2. Բառեր, որոնց արտահայտած նոր իմաստը պայմանավորված է այդ բառերի փոխաբերական գործածությամբ:

Առաջին խմբի մեջ են մտնում հետևյալ օրինակները.

*Բուշտ* - գրաբ. փամփուշտ, մ.հ. ուռուցք, պալար: Թե բուշտ ելնե՝ մի՛ առնէր երակ. գէն է (464):

*Գոյանալ* - գրաբ. գոյություն առնել, սկզբնավորվել, մ.հ. նաև աճել, մեծանալ: Թե ի վատթար կաթն փոխե՛ գողայն՝ նա գոյանայ և գիրանայ (21):

*Գործել* - գրաբ. կատարել, իրագործել, ազդել, մ.հ. նաև գործածել, կիրառել: Եւ ի յերկրէ ի յերկիր շատ բժշկութեան զարուեստն էի գործել (7):

*Խաղ* - գրաբ. զվարճություն, երեխայական զբաղմունք, մ.հ. նաև հող: Ոսկրացաւութիւն որ է ոսկերաց և խաղերուն ցան (440):

*Յեղ* - գրաբ. գերդաստան, տոհմ, մ.հ. նաև տեսակ: Քուզագ. ինքն ցեղ մն թաշանու՛ծ է (12) և այլն:

Բառերի փոխաբերաբար գործածությամբ պայմանավորված իմաստափոխության օրինակներից են.

*Դալար* - գրաբ. կանաչ, թարմ, մ.հ. նաև խակ, չիասած: Պահել զառողջութիւնն այն լաւ է, որ գդալար մրգերն չուտէ (56):

*Դուռ* - գրաբ. դուռն, մ.հ. նաև գրքի զլուխ, մաս: Յայս արուեստս շատ դժիկ ցուցանեմք գրեմք զբժշկութեան չաքսն և ստուղուսաթն (5):

*Երես* - գրաբ. դեմք, մ.հ. նաև գրքի մի էջը: Ի մէկ երեսն զտաքէ եղածն է գրած և ի մէկայլ երեսն զպաղէ եղածն է գրած (6):

*Դանիլ* - գրաբ. հատանել/իմ/ կտրվել, մ.հ. նաև սպառվել, վերջանալ: Մանուշակ ջրով եփէ որ մինչև հատնի (374):

գ) *Բուն միջինհայերենյան բառեր և նորաբանություններ*. միջին հայերենի բառապաշարում առանձնանում են հատկապես այն բառերը, որոնք առաջին անգամ են գործածվում գրավոր լեզվում, և զգացվում է, որ դրանք կան բարբառային,

ժողովրդախոսակցական ծագում ունեն, կան ոճական արժեք ունեցող հեղինակային նորակազմություններ են: Այս բառերը առաջին հերթին միջին գրական հայերենի և նրա բարբառների միջև եղած լեզվական սերտ կապը փաստող օրինակներ են: Դրանց մեծ մասն առ այսօր գործածական է հայերենի տարբեր բարբառներում:

ՕԲ-ում գործածված այդպիսի արմատական բառերից են՝ *սկրա (13), աղէկ (6), աղվոր (6), բացվենեկ (7)*՝ բարդածաղկավորների ընտանիքին պատկանող բույս՝ բարձվենյակ, *գարծիլ (7)* խավարծիլ, *գարեկ (183)* տիկնակլունձ, *գոգ (5)*՝ մեզ, *դուս (20)*՝ դուրս, *եղողակ (200)*՝ ճարճատուկ//*եղերդակ (345), եկ (124)*՝ երբ, *գառեկ (199)*՝ մկնդեղ, *գատ (5)*՝ առանձին, *գարդ (17)*՝ բացի, *թաթրուճ (125)*՝ ցախաբլր, *թորթ (152)*՝ գաղտրիկագիներ ընտանիքին պատկանող բույս՝ քարխտ, *թուք (368)*՝ թուքք, *թութայ (12)*՝ աչքի հիվանդություն, երբ կոպի տակ թթի նման միս է աճում, *թրիք (344)*՝ գոմաղբ, *ժիր (18)*՝ արագ, *ժուռ (95)*՝ խակ խաղող, ազոխ, *խկի (21)*՝ բնավ, ամենևին, *իրիցուն (109)*՝ երիցուն, *լեղի 1.*լեղապարկ (22), 2. դառը (23), *լմամ (27)* լրիվ և այլն:

Բացի արմատական բառերից՝ ՕԲ-ի բառապաշարում կան նաև կազմությամբ ածանցավոր ու բարդ միջինհայերենյան նորաբանություններ: Սակայն նախքան դրանց անցնելը հարկ ենք համարում անդրադառնալ մի կարևոր խնդրի, որը կապված է այն բառերի հետ, որոնք, ըստ բառարանային տվյալների, եզակի վկայությամբ գործածվել են միայն ՕԲ-ում, կամ եղած մյուս վկայությունները հետագա դարերում գրված աշխատություններում են հանդիպում: Այս բառերն ամբողջությամբ հեղինակային նորակազմություններ համարելն այնքան էլ ճիշտ չի լինի: Ավելի ճիշտ կլինի այդ բառերը բաժանել երկու խմբի.

ա) Բառեր, որոնք թեև բառարաններում արձանագրված են միայն ՕԲ-ի կիրառությամբ, սակայն այդ ժամանակ հաստատապես կիրառվել են տարբեր բարբառներում, իսկ մի մասը բարբառներում գործածվում է մինչ այսօր: Դրանցից են, օրինակ, *արցունքել (204), բլբլանք (153), եղլիութին (76), երկանութին (36), գայնել (48), գատեգատ (197), քերեկի (74), քնտալ (51), ժամիրօք (119), խոշորութին (181), խորուկ (227), կանանչափառ (76), կանգնման (14), կապուտաշվի (67), հարբածութին (164), ճուճ (380), մեն մենի (90), մթնգուն (18), մորուք (159), պաթիլ (384), սլիկ (18), սրտաժած (63), ցաւցնել (245), քանոց (30), օրհասրաք (95), օրմէք (87), օրեկ (66)* և այլն: Այս խմբին են պատկանում նաև այն հարադրավոր բայերը, որոնք ՄՅԲ-ում բերվում են միայն Ամասիացու եզակի վկայությամբ կամ ընդհանրապես վկայված չեն բառարաններում: Օր.՝ *ի թվու անցնիլ (305), ի միտն առնել (160), համբեր առնուլ (80), մնալ ի բանէ (32), սիրտն խառնակել (327), տղա ձգել (14)* և այլն:

բ) Բառեր, որոնք իսկապես կարելի է հեղինակային նորակազմություններ համարել: Դրանք գերազանցապես տերմինային արժեք ունեցող այնպիսի բառեր են, որոնք մեծապես նպաստել են ժամանակի գիտական լեզվի կատարելագործմանը և տերմինային մշակված համակարգի ստեղծմանը: Այդպիսի բառերից են, օրինակ, *ակռացաւութին (13), անժխտ (135), առատախօս (47), ատրիլալ (460), բշտաբերան (387), բշտանք (407), գանձակցաւ (381), գործդեղ (62), լիարին (362), խոցատ (511), ժանրագլուխ (19), կանչխտ (62), կապրցախ (97), կռնակացաւութին (61), հալաբուշտ (14), հողմանք (407), հոտալիք (28), ձեռնագործ (183), մարդակազմութին (20), մարդախտ (522), մշքադեղ (294), ոխասիրտ (18), չարածաղիկ (47), չքնտուր վայրի (381), պատութին (71), պարսկաւ (314), սգունք (65), ստամոքախանգար (151), ցրտահաւ (207)* և այլն: Այս խմբին են պատկանում նաև այնպիսի կազմություններ, ինչպիսիք են *զենարար (18), թուխմանալ (52), լատիֆութին (220), մաղասկաթիք (47), սուստկալ (94)* կիսափոխառությունները:

դ) «Օգուտ բժշկութեան» երկի միջինհայերենյան փոխառությունները. ատենախոսության այս բաժնում ներկայացրել ենք արտավեզվական գործոնների ազդեցությամբ

միջին հայերենի բառապաշար մուտք գործած և ՕԲ-ում կիրառված փոխառությունները, խոսել ենք քաղաքական, տնտեսական, մշակութային այն գործոնների մասին, որոնք նպաստել են տվյալ փոխառու լեզվից հայոց լեզվի բառապաշար որոշակի թվով բառերի անցմանը: Քանի որ թվային գերակշռություն ունենին արաբերենից և նոր պարսկերենից կատարված փոխառությունները, ներկայացրել ենք նաև դրանց տառադարձությունը:

### **Եզրակացություններ**

1. Բառակազմական կաղապարները, որոնք թիվը սահմանափակ է լեզվում, ՕԲ-ում խիստ չափավորված են: Դա պայմանավորված է մի կողմից աշխատության բովանդակությամբ, մյուս կողմից փոխառությունների անսահմանափակ կիրառությամբ:

2. Գրաբարում մեկ արմատական և մեկ բառակազմական ձևայիններից կազմված բառերը մոտ մեկուկես անգամ գերազանցում են երկու արմատներից կազմված բարդ բառերին: Ժամանակակից հայերենում միայն երկու արմատից կազմված բառերը կազմում են լեզվում եղած բառերի ընդհանուր թվի մոտ 30%-ը, իսկ մեկ արմատից և մեկ ածանցից կազմվածները՝ մոտ 15%-ը, այսինքն պարզագույն կաղապարներում բարդ բառերն են երկու անգամ գերազանցում ածանցավորներին: Թվային այսպիսի հարաբերակցությունը ժամանակակից հայերենում սպասելի էր, քանի որ նորակազմությունների մեծ մասը բարդ բառեր են: Մեր աշխատանքում, ուսումնասիրելով բնօրինակ բառերի պարզագույն կաղապարները նորակազմություններում, գալիս եմք հետևյալ եզրակացության. ընդհանուր նորակազմություններից 106-ը բարդ բառեր են, 69-ը՝ ածանցավոր, 15-ը՝ երկածանց, 32-ը՝ բարդածանցավոր:

3. Հոդակապով բարդությունների մոտ 50%-ն է միջինհայերենյան բաղադրություն, իսկ անհոդակապ բարդությունների՝ 60%-ը:

4. Ածանցումներում պահպանվել է հայերենի զարգացման բոլոր փուլերին հատուկ պատկերը. նախածանցավոր կազմություններն ավելի քիչ են, քան վերջածանցավորները: Նախածանցներից ամենակենսունակը դարձյալ *ան-* նախածանցն է, իսկ վերջածանցներից առավել գործուն են *-ություն*, *-աւոր*, *-ումն*, *-ք* ածանցները:

5. Տարբեր ածանցների հետ զուգորդելիության հնարավորություններով դարձյալ ամենակտիվը *ան-* և *-ութիւն* ածանցներն են: Այդպես է եղել հայերենի զարգացման ողջ ընթացքում. *ան-* և *-ութիւն* ածանցները մշտապես օժտված են անսահմանափակ կիրառությամբ: Մասամբ ակտիվ են նաև *-ական* և *-ք* ածանցները՝ որպես եզրային ածանցներ:

6. ՕԲ-ի բառապաշարում պատկանելի թիվ են կազմում հարադրավոր բայերը: Այս իրողությունը կապված է ՕԲ-ի լեզվի և հեղինակի ոճի հետ: Հարադրավոր բայերի կիրառությունը թեև հատուկ էր հայոց լեզվին ամենավաղ շրջանից, սակայն միջին հայերենում ավելի լայն տարածում ուներ, որը պայմանավորված էր առաջին հերթին հարադրավոր բայերի իմաստային առանձնահատկություններով, խոսքին ավելի կենդանի շունչ, թարմություն, ազատություն տալու հատկությամբ, հետևաբար կենդանի խոսակցական լեզվում ավելի տարածված լինելու փաստով:

7. Քանի որ հարադրավոր բայերի իմաստային կարևորագույն հատկանիշը բաղադրիչների իմաստային միասնությունն է, ամբողջականությունը, ապա հարադրավոր բայերի մեջ պետք է մտցնել նաև այն դարձվածքները, որոնք բաղկացած են երկու միավորից՝ հարադրից և բայից, որովհետև դարձվածքը նույնպես բնորոշվում է բառային ամբողջական իմաստով՝ թեկուզ փոխաբերական: Լինելով ժողովրդական մտածողության արդյունք և ունենալով ժողովրդական ծագում՝ դարձվածքները



հեշտությամբ հաստատվում են նաև գրական լեզվում: Հետագայում դրանց մի մասն անցավ լեզվի զարգացման նոր փուլին, ինչպես գրաբարյան դարձվածքների մի մասը, մի մասն էլ մնաց սուկ որպես միջին հայերենի բառապաշարի անբաժան մաս:

8. ՕԲ-ում առանձնացրել ենք մեկ օտար բաղադրիչով և հայերենի սեփական բառակազմական միջոցներով կազմությունները, որոնք ավելի ճիշտ կլինի ոչ թե փոխառություններ, այլ միջինհայերենյան նորակազմություններ անվանել: Այսպիսի կազմությունների ուսումնասիրությունը հատկապես կարևոր է հայերենի զարգացման տվյալ շրջանում որևէ օտար լեզվի ազդեցությունն ավելի ճշգրիտ ներկայացնելու համար: ՕԲ-ում հանդիպող այդ բաղադրությունների ընդհանուր թիվը 58-ն է: Դրանք գերազանցապես բայակազմության յուրատեսակ երևույթներ են՝ հարադրավոր բայերի յուրահատուկ ձևեր: Ինչպես փոխառությունների մեծագույն մասը արաբական է, այնպես էլ այս կազմությունները գերազանցապես կազմվել են արաբերեն հիմնական ձևույթներով:

9. Խոսելով ընդհանրապես միջինհայերենյան նորաբանությունների մասին՝ դրանք ՕԲ-ում կարելի է բաժանել հետևյալ խմբերի.

ա) Գրաբարին անծանոթ պարզ բայեր, որոնք միջին գրական հայերենում գործածվել են առաջին անգամ: Օր.՝ *աճռել (123), անել (5)/այնել (18), աշել (18), արտորալ (72), արցունքել (204), եփել (29), զայնել (48), ժածիլ (13), խածել (76), խոթել (190), ծռիլ (12), հայհանդել (133), հոնծիլ (28), հոտալ (120), ճկիլ (29), մարծել (489), մշխել (258), սղկել (249), քացխիլ (36), քշտել (23), օթիլ (65)* և այլն:

բ) Բայածանցներով կազմություններ՝ սուկածանցներով (*դժարնալ, խոցնալ, կակղանալ, պիտենալ, փակչել*), պատճառական (*աճռեցնել, աւաղցնել, գիճացնել*), բազմապատկական (*երնճկտալ, ճղքտիլ, ճեղքտիլ*), կրավորական ածանցներով կազմված (*աճռվիլ, կալվիլ, քաշվիլ*):

գ) Հարադրավոր բայեր (*զրուց տալ, ի միտն առնել, ի շուրջ ածել, տղա ձգել*):

դ) Ածանցավոր կազմություններ՝ կազմված մի կողմից գրաբարյան (*աճուկ, այրիկ, գաղտուկ, զանկիկ, ընկերո՞ղ, թեփուկ, խարտուք, խոզք, խորուկ, խորվուկ, կշտուց, կռնակ, ճաշք, մերկիկ, շնահաւոր, ուռուց, քաղցելութիւն, քամոց, քշիկ*), մյուս կողմից միջինհայերենյան ածանցներով (*այրեց, արճիճէ, գնացման, երիկամուն, զօղվածք, մօրուք*):

ե) Իսկական, կցական բարդություններ և կրկնավորներ (*աղվորերես, աղվորզուց, արիւնսահան, թերեփ, լիարիւն, կարճահար, կռնակացաւ, ձկնսահան, մէկ ի մէկ, ցեղ ու ցեղ, քիչ քիչ*):

10. Հետաքրքիր է նաև մեկ այլ իրողություն: Ա.Ամասիացին երբեմն հայերենում արդեն գոյություն ունեցող բառերի փոխարեն կիրառում է արաբական փոխառությունները: Օրինակ՝ նա գործածում է *աքո* բառը (36), մինչդեռ գրաբարում արդեն կար *մրուր* բառը: Այդպես էլ գործածում է *այրասայ* բառը՝ *հիրիկ* (97), *բուխարը* (49)՝ *գողորձի, զամխը* (62)՝ *խեժ, ըռահշան* (12)՝ *սարսուռ, դող, ըսթսխան* (14)՝ *այտոյց, լուֆան* (98)՝ *մանրագոր, խուսաթ ըլ սայլապը* (100)՝ *խուրոճ, հլթխը* (98)՝ *քաղբան, ճուարիշը* (7)՝ *խյուս, յուլխը* (97)՝ *մոշենի, նամլան* (70)՝ *մրջյուն, տխնաֆասը* (281)՝ *շնչարգել* բառերի փոխարեն: Այս երևույթը կարելի է բացատրել այն իրողությամբ, որ Ամասիացուն կարող էին անծանոթ լինել այդ բառերի գրաբարյան համարժեքները: Ի վերջո, ապրելով և իր բժշկական գործունեությունը ծավալելով օտար, հատկապես թուրքական միջավայրում, Ամասիացին կարող էր ծանոթ չլինել գրաբարյան ամբողջ բառազանձին: Մյուս կողմից՝ ժամանակի թելադրանքով յուրաքանչյուր ընթերցող, լինել դա բժիշկ թե բժշկությամբ պարզապես հետաքրքրվող մեկը, պետք է քաջ ծանոթ լինել արաբերեն տերմինաբանությանը (այնպես, ինչպես այսօր նույնը պահանջվում է

լատիներեն տերմինաբանության համար): Քանի որ հենց արաբերենով էր ստեղծվում ժամանակի գիտական, հատկապես բժշկագիտական գրականությունը, ուստի Ամասիացին հաճախ նաև չի թարգմանում և չի բացատրում իր գործածած փոխառությունները:

11. Ընդհանրապես միջին հայերենը, իր գոյության ողջ ընթացքում գտնվելով գրականացման, նորմավորման գործընթացում, այդպես էլ չկարողացավ հասնել ո՛չ լեզվական ձևերի միօրինակության, ո՛չ կառուցվածքային միատարրության: Այս բնութագրումը, ամբողջությամբ վերցված, բնորոշ է նաև ՕԲ-ի լեզվին: ՕԲ-ն գիտական արժեքավոր աշխատություն լինելուց բացի նաև միջին հայերենի բառապաշարային առանձնահատկություններն արտացոլող աղբյուր է, միջին հայերենին բնորոշ փոխառությունների առատությունն արձանագրող յուրօրինակ նմուշ, որի բառապաշարը կարելի է բնութագրել հետևյալ հատկանիշներով՝

ա) գրաբարյան մի շարք բառերի վերափնաստավորմամբ,

բ) բարբառային ծագման բառերի լայն կիրառությամբ,

գ) նորաբանություններով,

դ) գերազանցապես արաբերենից և նոր պարսկերենից վերցրած օտար բառերի, հատկապես մասնագիտական տերմինների առատությամբ:

12. Որպես մշակված տերմինաբանության լեզվի՝ ՕԲ-ի լեզվին հատուկ են մի կողմից բառ-տերմինները կամ տերմինային բառերը (օր.՝ *ակռատակ, աճուկ, կալ, գործել*), մյուս կողմից նեղ մասնագիտական տերմինները (օր.՝ *արծվիք, մաղասկաթիք, մկնատատ* և այլն): Սրանցից տերմինային բառերն ունեն ավելի լայն գործածություն, բազմիմաստ են, իսկ սոսկ տերմինները մենիմաստ են, կապված են դրանցով արտահայտվող գիտական հասկացությունների հետ և սահմանափակ գործածություն ունեն:

13. Ինչպես միջին հայերենի բառապաշարում, այնպես էլ ՕԲ-ում, քանակական առումով արաբական փոխառություններից հետո (55%) երկրորդ տեղում իրանական փոխառություններն են (37%), ապա թուրքական (5%) և հունական (3%):

14. Թե՛ արաբական, թե՛ իրանական փոխառություններն ունեն գերազանցապես տերմինային արժեք: ՕԲ-ում բազմաթիվ բառեր կան, որոնք առաջին անգամ գործածվել են հենց ՕԲ-ում կամ միակ վկայությունը ՕԲ-ում է: Այդպիսի բառերի առանձնացումը խիստ կարևոր է, քանի որ դրանով որոշվում է տվյալ փոխառության գործածության հաճախականությունը և լեզվական արժեքը, որը կարևոր է ընդհանրապես փոխառյալ բառերի արժևորման, գնահատման համար: Սեկ-երկու անգամ գործածված բառերն իհարկե մեծացնում են այս կամ այն լեզվից փոխառված բառերի թիվը միջին հայերենի բառապաշարում, սակայն դրանք սահմանափակ կիրառությունը ցույց է տալիս, որ դեռևս միջին հայերենում այդ փոխառությունները, թեկուզ հենց բժշկագիտական գրականության լեզվում լայն գործածություն չունենին, որպես օտար գիտաբառեր էին գիտակցվում, և լեզվի զարգացման ընթացքում առաջինը հենց դրանք պետք է փոխարինվեին նոր բառերով:

15. Տարբեր լեզուներից կատարված փոխառությունների մեջ հանդիպում են կրկնակ փոխառություններ, երբ արդեն փոխառված բառը փոխառվում է ևս մեկ անգամ նույն կամ այլ լեզվից: Այս երևույթը տարածված էր միջին հայերենում: Սակայն եթե միջին հայերենում կրկնակ փոխառություններն իրենց հնչյունային կազմով նման են իրար (օր.՝ *բորակ-պորակ, բուրգն-բուրջ, բողջէ-պողջայ, շօշան-տուսան* և այլն), որը պայմանավորված է միևնույն բառի հին և միջին շրջաններում փոխառված լինելով կամ միևնույն լեզվի զարգացման տարբեր փուլերից փոխառված լինելու հանգամանքով, ապա ՕԲ-ում կրկնակ փոխառությունների բնույթը և առաջացման պատճառներն այլ են: ՕԲ-ում հաճախ հանդիպում են միևնույն հասկացության տարբեր լեզուներից,

երբեմն նաև նույն լեզվից տարբեր հնչյունային կազմով փոխառությունները: Օր.  
*հարսնախոտ* բառի համար գործածված է արաբերենից փոխառված *հապ ըլ պրինկ*  
բառը և դարձյալ արաբ. *քաքանած* բառը, *շիխար* բույսի համար՝ *շանկիար* (պրսկ.) և  
*խաս ըլ հիմար* (արաբ.), *աղաբույս* բառի համար՝ թուրք. *չողան* և պրսկ. *աւշնան*  
բառերը և այլն: Այսինքն դրանք նույնանիշներ են, որոնք ՕԲ-ում հաճախակի են  
հանդիպում մի քանի պատճառներով: Նախ ՕԲ-ն ոչ թե մեկ աշխատության  
թարգմանություն է, այլ փոխադրություն է մի քանի աշխատությունների՝ հատկապես  
արաբերեն ու պարսկերեն զրված: Երկրորդ՝ այդ բառերը, լինելով տերմիններ,  
հաճախակի գործածություն չունեին լեզվում, ամրացած չէին լեզվի գիտական  
բառապաշարում, ուստի հեղինակը կարող էր նաև չհիշել, որ այդ բառն արդեն  
գործածել է, օրինակ, արաբերեն փոխառությամբ և պարսկերենից այն տառադարձելու  
կարիք չկա:

16. Ի վերջո, պետք է նշենք, որ մինչ այն հսկայական աշխուժությունը, որ  
բժշկության մեջ առաջացրին արաբ գիտնականները, հայերը ծանոթ էին եվրոպական  
բժշկության հսկայական պաշարի միայն մի չնչին մասին: Յենց արաբական  
քաղաքակրթության ազդեցությամբ են դաստիարակվել մի շարք հայ բժիշկներ. դրանք  
առաջին հերթին Մ.Յերացին ու Ա.Ամասիացին են, որոնք միջին դարերում մեծ  
հեղինակություն են վայելել ու հայ իրականության մեջ պահպանել են արաբական  
բժշկության լավագույն ավանդույթները:

#### **Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են հետևյալ հոդված- ներում՝**

1. *Ամիրդովլաթ Ամասիացու բժշկագիտական ժառանգության շուրջ*, Բանբեր  
Երևանի համալսարանի, Երևան, 2006, N3, էջ 148-155:
2. *Արաբական փոխառությունները Ամիրդովլաթ Ամասիացու «Օգուտ  
բժշկութեան» աշխատության մեջ*, Կանթեղ, Երևան, 2010, N3, էջ 122-128:
3. *Միջինհայերենյան բառերը և նորաբանությունները Ամիրդովլաթ Ամասիացու  
«Օգուտ բժշկութեան» երկում*, Բանբեր Երևանի Վ.Բրյուսովի անվան  
պետական լեզվահասարակագիտական համալսարանի, Երևան, 2014, N1, էջ  
123-131:
4. *Չնչունափոխված գրաբարյան բառերը և միջինհայերենյան իմաստային  
նորակազմությունները Ամիրդովլաթ Ամասիացու «Օգուտ բժշկութեան»  
երկում*, Հայագիտական հանդես, Երևան, 2015, N1, էջ 34-41:

**АСТХИК АЛЬБЕРТОВНА КАРАПЕТЯН**  
**ЛЕКСИКОН ТРУДА “ПОЛЬЗА МЕДИЦИНЫ” АМИРДОВЛАТА АМАСИАЦИ**

Диссертация на соискание ученой степени кандидата филологических наук  
по специальности 10.02.01 - Армянский язык

Защита состоится 8 июня 2015 года в 15:00, на заседании специализированного  
совета по лингвистике 019 ВАК

при Институте языка им. Гр. Ачаряна НАН РА  
(адрес: 0015, Ереван, ул. Гр. Лусаворича 15)

**РЕЗЮМЕ**

Анализ лексикона произведений того или иного автора дает возможность выявить и констатировать сходства с лексикой данного языка на данном этапе развития. С этой точки зрения большой интерес представляют труды по медицине Амирдовлата Амасиаци, которые и по сей день являются богатым источником для представления словарного фонда среднеармянского языка, а также изучения его фонетических и грамматических реалий. Однако словарный запас данного труда ни разу не становилась предметом отдельного исследования.

Цель диссертации заключается во всестороннем изучении лексикона “Польза медицины” А. Амасиаци (ПМ), в исследовании отраженных в труде словообразовательных закономерностей, а также лексических особенностей и изменений, свойственных армянскому языку XV века. Для достижения данной цели были поставлены следующие задачи:

1. Выделить и изучить словообразовательные модели, а также ими образованные слова в габаре и среднеармянском, выявить степень эффективности и функциональной нагрузки каждой отдельной модели и подмодели, определить структуры, функционирующие на словообразовательном уровне.

2. Выделить те слова габара, которые в подлиннике используются в новом значении.

3. Представить неологизмы среднеармянского языка.

4. Представить все встречающиеся в труде заимствования, классифицировать их по источникам, выделив те заимствования, которые впервые были использованы в данном труде или единственный раз в среднеармянском языке вообще. Исследуя заимствования, представить также те исторические, политические, языковые и культурные предпосылки и влияния, которые в качестве внеязыковых факторов способствовали появлению заимствований в среднеармянском языке.

Структура диссертационной работы:

Введение

Глава 1. О некоторых вопросах словообразования

Глава 2. Словосложение и аффиксация в труде “Польза медицины”

а) Модели сложных слов.

б) Составные глаголы.

в) Аффиксальные модели.

г) Сложносуффиксальные слова.

д) Частичные заимствования и полукальки.

Глава 3. Лексические слои труда “Польза медицины” с точки зрения происхождения:

1. Слова, перешедшие из габара.

2. Лексический слой среднеармянского языка.

а) Коренные слова среднеармянского языка.

б) Слова, подвергшиеся фонетическим и лексическим изменениям.

в) Исконно среднеармянские слова и неологизмы.

г) Среднеармянские заимствования.

Заключение

Список сокращений

Список использованной литературы

Словарь-приложение.

**Основные выводы сводятся к следующим пунктам:**

1. Изучение моделей сложных новообразований среднеармянского языка показало: из них 106 – сложные слова, 69 – аффиксальные, 15 – префиксально-суффиксальные, 32 – сложносуффиксальные.

2. Около 50% сложных слов из среднеармянского – с интерфиксом, а 60%– без интерфикса.

3. В лексике ПМ значительную часть составляют составные глаголы. Это обусловлено языком ПМ и стилем автора. Использование составных глаголов было свойственно армянскому языку еще с раннего периода его развития, однако получило более широкое распространение в среднеармянском, что обусловлено, в первую очередь, семантическими особенностями составных глаголов, стремлением придать речи живое дыхание, свежесть, свободу, следовательно, фактом большей распространенности в разговорном языке.

4. В ПМ мы выделили слова, образованные с помощью одного заимствованного компонента и собственно армянских словообразовательных средств. Их будет правильнее называть не заимствованиями, а новообразованиями среднеармянского языка. Изучение таких образований особенно важно для более точного представления влияния того или иного иностранного языка на развитие армянского языка в данный период. Число таких образований, встречающихся в ПМ, равно 58. Это в основном своеобразные типы глагольных образований, особые виды составных глаголов. Как и большинство заимствований арабского происхождения, эти образования сформированы преимущественно с помощью основных арабских морфем.

5. Лексику ПМ в общем и целом можно охарактеризовать по следующим признакам:

а) переосмысление целого ряда слов габара,

б) широкое применение слов, имеющих диалектное происхождение,

в) неологизмы,

г) большое количество иностранных слов, в частности терминов, заимствованных в основном из арабского и новоперсидского.

6. Исследование 25 словообразовательных моделей и подмоделей показало, что из них 20 – сложные, 5 – аффиксальные; в среднеармянском языке выделено 222 неологизма, изучено 759 заимствований, из которых 354 арабского происхождения, 238 – персидского, 36 – турецкого, 18 – греческого.

### ASTGHİK ALBERT KARAPETYAN

#### **The vocabulary of “The Benefits of Medicine” by Amirdovlat Amasiatsi**

Dissertation on Candidate’s Degree in Philological Sciences on the Specialization 10.02.01 -  
The Armenian Language

The Defense will be held at the Address: 0015, RA, Yerevan, Grigor Lusavorich 15, Institute of Language after Hr. Acharyan of the National Academy of Sciences, at the session of Specialized Council on Linguistics 019 HAC, at 15:00, 08.06.2015

### SUMMARY

The examination of the vocabulary of the complete works of any author first of all enables the researcher to reveal and record the similarities with the vocabulary of a particular language in the given period of its development. Amirdovlat Amasiatsi is of a special interest from this perspective as although his medical works have provided vast material to present the vocabulary of the Middle Armenian, as well as to examine the phonetic and grammatical facts, but the word-stock of the present work hasn’t been subject to a particular analysis yet. The analysis of the rich and multilevel vocabulary of “*The Benefits of Medicine*” (*B.M.*) can fully and clearly present the development of the literary language in the given period of time.

The aim of the research is to thoroughly examine the vocabulary of the “The Benefits of Medicine” by Amirdovlat Amasiatsi, as well as to reveal all the peculiarities characteristic of the 15th century Armenian word-formation. To attain this aim, we have set out the following objectives:

1. To single out and examine word-forming patterns, the Ancient Armenian and the Middle Armenian words formed with these patterns, to measure the functional load of every pattern and sub-pattern, to present the structures functioning on the word formation level.
2. To single out those Old Armenian words that acquired new meanings in the original.
3. To single out the Middle Armenian neologisms.
4. To present all the borrowings used in the work, to classify them according to the source borrowed, singling out the borrowings, which are used in the work for the first time, or those which are used only once in the whole Middle Armenian period. While analysing the borrowings to introduce the political, historical, linguistic and cultural situation that contributed to the changes in the Middle Armenian vocabulary as an extra-linguistic factor.

The findings of the research can be used while designing courses on History of the Armenian language, Historical Lexicology, Historical Word-Formation, as well as in researches on the interrelations of the Middle Armenian and Eastern languages, in particular Arabic and Farsi.

The present work has the following structure:

Introduction

Chapter 1. Theoretical Assumptions on Word-Formation

Chapter 2. Word Composition and Word Derivation in *The Benefit of Medicine*

- a) Patterns of compounds
- b) Compound verbs
- c) Derivational patterns
- d) Derivational Compounds
- e) Hybrid words and semi-calques.

Chapter 3. Vocabulary layers of *The Benefits of Medicine* according to their origin

- a) Words dating back to the Old Armenian Period
- b) The Middle Armenian word-layer
- a) Native or root Middle Armenian words
- b) The Old Armenian words subject to phonetic or semantic change
- c) The Middle Armenian words and neologisms
- d) The Middle Armenian borrowings

Conclusion

References

Appendices.

**Basic conclusions:**

1. 106 out of all neologisms are compounds, 69 – derivatives, 15 – derivatives with compound suffixes, 32 – derived compounds.

2. 50% of compound words with a special linking element and 60% of compound words without a special linking element are of the Middle Armenian origin.

3. There are a large number of analytical verbs in the BM. This is due to the language of the BM and the style of the author. Although the use of analytical verbs was characteristic of the Armenian language starting from the earliest times of its development, but it was especially widespread in the Middle Armenian Period, which was first of all due to semantic peculiarities of analytical verbs, the ability to give the speech freshness, freedom, and consequently being widespread in everyday speech.

4. We have singled out patterns that consist of a foreign language component and word formation means used in Armenian, which are rather the Middle Armenian neologisms than borrowings. The examination of this kind of structures is especially important to fully present the influence of any foreign language on Armenian. There are 58 such constructions in BM. They mainly represent a special type of analytical verbs. As in case with the majority of the borrowings, this kind of words are also formed by means of Arabic morphemes.

5. The BM lexicon can be characterized by the following features.

- a) A number of the Old Armenian words acquired new meanings
- b) Wide usage of dialectal words
- c) Neologisms
- d) Abundance of foreign words, especially professional terminology from Arabic and Farsi.

6. We have singled out 25 derivational patterns and sub-patterns (20 – patterns of compounds, 5 – affixational patterns), 222 neologisms of the Middle Armenian, and 759 borrowings (354 – Arabic, 238 – Farsi, 36 – Turkish, 18 – Greek).